ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10

ք. Երևան «12» նոյեմբերի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՋԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Է. Մարտիրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացող նախագծային առաջադրանքների տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **12 000 000 (տասներկու միլիոն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **12 000 000 (տասներկու միլիոն)** ՀՀ դրամը, Պատվիրատուն կարող է փոխանցել Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	**ԿԱՏԱՐՈՂ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500348005680
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00891484
Հ/Հ 900011023927	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
1	71241200/1		ՀՀ դրամ	12 000 000	12 000 000	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 91 օրացուցային օր՝ համաձայն աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի

Տեխնիկական բնութագիր

Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը	Օբյեկտը կառուցվել է 1960-ական թվականներին, տեղակայված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 38 հասցեում: ,քոլեջ հաճախող ուսանողների փաստացի թիվը շուրջ 200 է, բաղկացած է 8 մասնաշեքերից, որից. - **<u>ուսումնական մասնաշենք /3092.6 քմ/</u>** հատակագծային չափերն են՝ 15.5x61.0մ, կառույցը քառահարկ է, կոնստրուկտիվ հիմնական լուծումներն են՝ պատերի հիմքերը ժապավենային են, սյուներինը՝ առանձին տիպի, ե/բ սյունակալներով, պատերը 50-55սմ հաստ., իրականացված են <միդիս> տիպի շարվածքով, գլխավոր և կողային ճակատները սրբատաշ երեսաշարով, միջհարկային ծածկերն ու վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր է, փայտե ծպեղնային համակարգով ցինկապատ պողպատե պրոֆիլացված ծածկույթով, կազմակերպված ջրահեռացմամբ, մ/շ շահագործվում է, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 2-րդ աստիճանի - **<u>մարզադահլիճի մասնաշենք /432 քմ/</u>** հատակագծային չափերն են՝ 12.6x34.0մ, 1-2 հարկանի կառույց, կոնստրուկտիվ լուծումներն են՝ պատերի հիմքերը ժապավենային, պատերը 50-55սմ հաստ., իրականացված են <միդիս> տիպի շարվածքով, գլխավոր և կողային ճակատները սրբատաշ երեսաշարով, դահլիճի վերնածածկը 12.0մ թռիչքով, հավաքովի ե/բ հեծաններով, հավաքովի կլորանցքավոր սալերով, տանիքը լանջավոր է, փայտե ծպեղներով, ցինկապատ պողպատե պրոֆիլացված ծածկույթով, կազմակերպված ջրահեռացմամբ, մ/շ շահագործվում է, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 2-րդ աստիճանի - **<u>ճաշարանի մասնաշենք /485.7 քմ/</u>** հատակագծային չափերն են՝ 18.4x30.8մ, կառույցը մահահարկ է, պատերի հիմքերը ժապավենային են, սյուներինը՝ առանձին տիպի, պատերը 50-55սմ հաստ., իրականացված են <միդիս> տիպի շարվածքով, ճակատների մակերևույթները սվաղված են ց/ա պաշտպանիչ շերտով, տանիքը լանջավոր է, փայտե ծպեղներով, ասբոշիֆերից, անկազմակերպ ջրահեռացումով, մ/շ չի շահագործվում, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 4-րդ աստիճանի

	- **հանրակացարանային մասնաշենք /2444.3 քմ/** հատակագծային չափերն են՝ 13.2x54.6մ, կառույցը քառահարկ է, կոնստրուկտիվ լուծումներն են՝ հիմքերը ժապավենային, պատերը 50-55սմ հաստ., իրականացված են <միդիս> տիպի շարվածքով, պատերը պատված են g/a սվաղաշերտով, միջհարկային ծածկերն ու վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր է, անկազմակերպ ջրահեռացումով, մ/շ չի շահագործվում, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 3-րդ աստիճանի - **<u>ավտոտնակների մասնաշենք</u> /187.7 քմ/** հատակագծային չափերն են՝ 13.0x18.0մ, կառույցը միահարկ է, կոնստրուկտիվ լուծումներն են՝ հիմքերը ժապավենային են, խամքարաբետոնից, պատերը 50-55սմ հաստ., իրականացված են <միդիս> տիպի շարվածքով, վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր է, անկազմակերպ ջրահեռացումով, մ/շ չի շահագործվում, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 2-րդ աստիճանի - **կաթսայատան մասնաշենք /259.9 քմ/** հատակագծային չափերն են՝ 12.6x24.6մ, կառույցը միահարկ է, կոնստրուկտիվ լուծումներն են՝ հիմքերը ժապավենային են, պատերը կանոնավոր ձևի տուֆաքարի շարվածքով, վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից և հեծաններից, տանիքը լանջավոր է, փայտե ծպեղնային համակարգով, ասբոշիֆերից, անկազմակերպ ջրահեռացմամբ, մ/շ չի շահագործվում, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 3-րդ աստիճանի - **գոյություն ունեցող ակումբային (հանդիսությունների) մասնաշենքը** փոխարինվել է նորակառույցով 2014-2015թվականներին, ներկայումս շահագործվում է, առկա են արդի ինժեներական համակարգեր և արդի ներքին հարդարում, հագեցած է գույքով, տարածքը բարեկարգված է - **էլեկտրաենթակայանի մասնաշենք /12.9 քմ/** հատակագծային չափերն են՝ 3.7x5.75մ, միահարկ շինություն, հիմքերը ժապավենային, տանիքը հարթ, անկազմակերպ ջրահեռացմամբ, ըստ տեխվիճակի եզրակացության վնասվածությունը 2-րդ աստիճանի: Կրթական ամբողջ համալիրի տեխնիկական վիճակի <Հայսեյսմշին և ԿՊԳՀԻ> ԲԲԸ ուսումնասիրության եզրակացությունը ձեռք է բերվել 2012 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ (09.11.2012թ թիվ11-1/318): Քոլեջի հանդիսությունների դահլիճը <Հայսեյսմշին և ԿՊԳՀԻ> ԲԲԸ կողմից կրկնակի ուսումնասիրվել է 2013 թվականին (25.10.2013թ թիվ 13/379) և դրա հիմքով իրականացվել են նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: 2009-2012 թթ քոլեջի ուսումնական մասնաշենքում իրականացված հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում վերակառուցման տեխնիկական միջոցառումներ չեն նախատեսվել՝ ներքին ինժեներական ցանցերը մասնակի նորոգվել են: Քոլեջը գործում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ:
Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	**Նախատեսվում է** - ուսումնասիրել համալիրի տարածքը և ձեռք բերել ինժեներաերկրաբանական հետազննության, <u>գոյություն ունեցող ուսումնական, ճաշարանային, մարզադահլիճի և հանրակացարանային մասնաշենքերի, ինչպես նաև գոյություն ունեցող կաթսայատան</u> տեխնիկական վիճակի ոսումնասիրության նոր եզրակացություններ, ինչպես նաև իրականացնել գեոդեզիական աշխատանքներ: - ձեռքբերված եզրակացությունների արդյունքներով և գոյություն ունեցող շենքային վնասվածության և/կամ ֆիզիկական մաշվածության տվյալների հիման վրա ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների (կազմաքանդման, վերակառուցման կամ նորի կառուցման նպատակահարմարության) համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար - մշակել նոր կառուցվող ուսումնական մասնաշենքի և շինությունների արդի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ համակարգի լուծումներ (հիմքեր, պատեր, ծածկեր, բացվածքներ, տանիք) - ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության

	և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում, - հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ըստ անհրաժեշտության ***(եթե շենքը նախագծվելու է երկու և ավելի հարկայնությամբ)*** վերհան սարքեր կամ վերելակ (***համապատասխան նորմատիվ փաստաթղթերով նախատեսվող այլ միջոցառումներ)***, - տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն, արտաքին խաղահրապարակի կառուցում, ըստ անհրաժեշտության ***(եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման)*** կառուցել-վերակառուցել արտաքին հաղորդակցուղիներ և այլն ***(բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ)***, արդիականացման շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով: - նախագծի շրջանակներում ջրատաքացուցիչներով և ֆոտովոլտային պանելներորով այլընտրանքային էներգիայի աղբյուրներ - ընտրվող նյութերը աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ **Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.** 1. Նոր ուսումնական մասնաշենքի կառուցման նախագիծ՝ նախատեսված 250 ուսանողի համար /սենյակների անվանացանկը համաձայն <u>Հավելված N 1.1-ի</u>/ 2. Գոյություն ունեցող մարզադահլիճի մասնաշենքի հատակի ծածկույթի փոխարինման նախագիծ 3. *Անասնաշենքի նախագիծ՝ 25 գլուխ կովի համար, ներառյալ մեքենայացված կթի հրապարակով, մատղաշի բացօթյա պահվածքի հրապարակով, անասունների զբոսանքի ցանկապատ փարածքով* 4. 100 տն խոտի կուտակման ծածկված տարածքի նախագիծ 5. *Գյուղտեխնիկայի պահպանման ծածկված փարածքի նախագիծ՝ նվազագույնը 4 տրակտորի համար* 6. Գոյություն ունեցող կաթսայատան վերակառուցման կամ նոր կաթայատան կառուցման նախագիծ՝ ըստ անհրաժեշտության, /հիմք ընդունելով նոր տեխնիկական վիճակի եզրակացությունը/ 7. Ջրի ռեզերվուար 8. Ջրատաքացուցիչներով և ֆոտովոլտային պանելնորվ այլընտրանքային էներգիայի աղբյուրներ 9. Այլ ենթակառուցվածքներ ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների • *Հաշվի առնելով, որ կառուցվելու է նոր ուսումնական մասնաշենք, նախատեսվում է կաթի վերամշակման արտադրամասի համար անհրաժեշտ սենքերը, լաբորատորիաները ինչպես նաև վարչական միավորները քոլեջի միջոցների հաշվին տեղակայել գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքում /սենյակների անվանացանկը համաձայն <u>Հավելված N 1.1-ի</u>/*
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում՝** - Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում» ծրագիր **Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** - ճարտարապետահատակագծային առաջադրանք (ներ) և տեխնիկական պայմաններ,

- շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացությունները
- ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (ներ),
- նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),
- հանույթ,
- չափագրություններ,

Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝

- ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. <ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի <ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> N263-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 13.12.2007թ <ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության 14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 1490-Ն որոշում,
- ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 05.04.2018թ <Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին> թիվ 43-Ա հրաման,
- ՀՀ առողջապահության նախարարի 28.03.2017 թվականի <Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ> N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-Ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> N 12-Ն հրաման,
- ՀՀ կառավարության 16.02.2006թ թիվ 392-Ն որ. <Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին>,
- ՀՀ քաղաքաշինության նախարարի հրաման 24.03.2016թ N49-Ն՝ <ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թթ ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար ՀՀ-ում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին>
- ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.02.2006թ թիվ 24-Ն հրաման՝ ՀՀՇՆ II-6.02-2006 <Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր>,
- <Պատմության և մշակույթի հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին> ՀՀ օրենք,
- ՀՕ-110-Ն 21.06.2014թ <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենք,
- ՀՀ կառավարության 04.05.2017թ <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 526-Ն որոշման Կարգի 33-րդ կետի 10-րդ ենթակետի՝
- ՀՀ կառավարության 23.06.2011թ <Գոգործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում վերաբաշխում եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի n 1748-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու եվ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը գումար հատկացնելու մասին> **թիվ 879-Ն** որոշման կարգը պահանջները

	- ՀՀ կառավարության 25.12.2014թ թիվ 1504-Ն որ. <Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին>:
Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն Նախագծային աշխատանքների իրականացում «Աշխատանքային Նախագիծ» 1 (մեկ) փուլով
Նախագծի կազմը	**«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»** **<u>Նախագծի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր</u>** **1. Ընդհանուր բացատրագիր** **2. Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) **3. Ճարտարապետաշինարարական մաս** - Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/ **4. Կոնստրուկտիվ մաս** - Կոնստրուկտիվ լուծումներ, կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն **5. Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր) **6.** էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության և օդորակման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր,կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն **7. Շին-մոնտաժային աշխատանքների նախահաշիվ** **8.** Ջրատաքացուցիչներով և ֆոտովոլտային պանելներով այլընտրանքային էներգիայի աղբյուրներ առանձին նախահաշվով **9.** Շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով **10.** Շինարարության կազմակերպման նախագիծ **11.** Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ **12.** Հաշմանդամների համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ **13.** Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ: **14.** Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ **Համաձայնեցումներ** *<u>Նախագծի համաձայնեցում</u>* **1.** Համայնքի ղեկավարի, **2.** ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, **3.** ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, **4.** ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի

	նախարարության հետ: Ոլորտի գլխավոր կարգադրիչ (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ
Այլ պահանջներ	***<u>Եզրակացություններ</u>*** ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման */քանդման, վերակառուցման, կառուցման/* նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում. 1. Նախագծողի կողմից ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների և տեխնիկական պայմանների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն հորատման միջոցով՝ համաձայն գործող կարգերի և գրունտների լաբորատոր փորձարկման միջոցով 2. Օբյեկտի կազմում գոյություն ունեցող ուսումնական, ճաշարանային, մարզադահլիճի և հանրակացարանային մասնաշենքերի, ինչպես նաև գոյություն ունեցող կաթսայատան տեխնիկական վիճակի մասին ուսումնասիրություն և եզրակացության ձեռքբերում կամ տրամադրում, որպես ծրագրի հիմնավորում և հետագայում դրանց օգտագործման նպատակահարմարության գնահատման ելակետային նյութի ապահովում 3. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննություն /համաձայն ՀՀ օրենսդրության/ ***Փորձաքննություններ*** 1. որպես բարձր ռիսկայնության (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում քաղաքաշինական (պարզ) փորձաքննության եզրակացության ձեռքբերում՝ նախագծողի կողմից 2. պետական համալիր փորձաքննության ապահովում՝ Պատվիրատուի նախաձեռնությամբ **Շինարարական նյութերի, պատրաստվածքների *(շահագործման) նկատմամբ պահանջներ*** 1. նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ 2. նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ 3. էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ 4. Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: 5. Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: ***<u>Նախագծի ներկայացում</u>*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ, երկլեզու՝ հայերեն և ռուսերեն, փաստաթղթային և էլեկտրոնային՝ CAD և PDF տարբերակներով, այդ թվում նախահաշվիվը՝ Exel տարբերակով: ***<u>Ժամկետ</u>*** Աշխատանքների կատարման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից՝ 91 օրացուցային օր՝ համաձայն աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի /Հավելված N 1.2/, ներառյալ քաղաքաշինական (պարզ) փորձաքննության դրական

	եզրակացության ձեռքբերումը, որից հետո ՆՆՓ-ն Պատվիրատուի նախաձեռնությամբ կներկայացվի պետական համալիր փորձաքննության: Ըստ անհրաժեշտության (եթե համալիր (այդ թվում պարզ) փորձաքննության արդյունքներով տրվել է եզրակացություն, հետևյալ ձևակերպմամբ «Նախագիծը վերադարձվում է լրամշակման»), նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակում՝ առանց փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023927
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500348005680
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն՝

_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 պայմանագրի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի մասնաշենքերի հիմնական սենքերի կազմը

1. **Նոր կառուցվող ուսումնական մասնաշենք 250 ուսանողի համար**

Հ.հ	Սենյակի անվանումը
1.	Անասնաբուժության մասնագիտացված լսարան /-ներ/
2.	Կաթի և կաթնամթերքի մասնագիտացված լսարան /-ներ/
3.	Հաշվապահական հաշվառման մասնագիտացված լսարան /-ներ/
4.	Ֆինանսների մասնագիտացված լսարան /-ներ/
5.	Շուկայաբանության /մենեջմենթ/ լսարան
6.	Փոխադրումների կազմակերպման և կառավարման մասնագիտացված լսարան /-ներ/
7.	Սնհանգույցներ
8.	Խորդանոցներ
9.	Հանդիսությունների սրահ /խորհդրակցությունների դահլիճ /30 անձի համար/
10.	Ճաշարան /30 անձի համար/
11.	Այլ հարակից և անհրաժեշտ սենքեր

2. **Կաթի վերամշակման արտադրամաս /գոյություն ունեցող ուսումնական մասնաշենք/**

Հ.հ	Սենյակի անվանումը
12.	Կաթնամթերքի տեխնոլոգիայի կաբինետ
13.	Տեխնոլոգիական սարքավորումների, պրոցեսների և ապարատների լաբորատորիա
14.	Քիմիայի և մանրէակենսաբանության լաբորատորիա
15.	Էլեկտրատեխնիկայի և ավտոմատիկայի լաբորատորիա
16.	Վարչական սենքեր
17.	Խոհանոց
18.	Խորդանոցներ
19.	Սանհանգույցներ
20.	Այլ հարակից և անհրաժեշտ սենքեր

3. **Անասնաշենք 25 գլուխ կովի համար, ներառյալ մեքենայացված կթի հրապարակով, մատղաշի բացօթյա պահվածքի հրապարակով, անասունների զբոսանքի ցանկապատ տարածքով**
4. **100 տն խոտի կուտական տարածք ծածկարանով**
5. **Գյուղտեխնիկայի պահպանման տարածք ծածկարանով՝ նվազագույնը 4 տրակտորի համար**
6. **Կաթսայատուն/վերակառոցուցում կամ նոր կառուցվող/**
7. **Ջրի ռեզերվուար**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11
կառավարական տուն 3	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 11500348005680
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00891484
Հ/Հ 900011023927	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1.2
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման

Հ.հ	ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը	Շաբաթների քանակը (ընդամենը 91 օրացուցային օր)												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	Ելակետային նյութերի հավաքագրում													
2	Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում													
3	Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ													
4	Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում													
5	Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում													
6	Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ													
7	Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ													

8	Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը													
9	Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում													
10	Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում													
11	Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում													

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023927
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500348005680
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն՝

_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/1	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	12 000 000	12 000 000	12 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023927
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<ԶԱՆԳՎԱԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11500348005680
ՀՎՀՀ 00891484

Տնօրեն՝

_____ Է. Մարտիրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 12 » նոյեմբերի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
«ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «08» 11 2019թ.**

«ԶԱՆԳՎԱՇ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Է. Մարտիրոսյանի (նույնականացման քարտի համարը՝ 001487438) որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/10» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում. Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԶԱՆԳՎԱՇ » ՍՊԸ
ընկերության անվանումը

Ք. Երևան,Նոր Նորք Գյուլիքեխվյան փ. 7/11
ընկերության հասցեն

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

h/h 115003480056 80
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 00891484
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

տնօրեն Է. Մարտիրոսյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ
Օր/ամիս/տարի
** *լրացվում է մասնակցի կողմից*

«ԶԱՆԳՎԱՇ»
«ЗАНГВАЦ»
«ZANGVATC»
00891484

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[14]
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «ԶԱՆԳՎԱԾ » ՍՊԸ	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	
6. Վճարողի հաշվի համարը՝ 11500348005680	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00891484	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ 1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար)	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ (AMD)	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.S.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.S.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.S. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.S. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

«ԶԱՆԳՎԱԾ»
«ЗАНГВАЦ»
«ZANGVATC»
00891484

[14] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*